




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

Այդպիսի մասունք մը հայտնվեցավ վերջերս: Գոհարիկ Ղազարոսյան կես դարն է վեր գորգորանքով պահած էր զայն ու հիմա Երևան է ղրկել: Կոմիտաս, նույն այդ օրերուն, երբ խաղաղության վայրկյաններ կունենար արեւելք իր հողին, փորձած է թուղթին հանձնել իր մտածումները: Նշխար մը փրկված է նաև անոնցմե. Թեոդիկ զայն տպեց զինագաղարին. ան հետևյալն է.

Ազգիք վիճակը¹²

...Հոտն անհովիվ՝ մոլոր ու շփոթ, աներեւելով ի անդուապ ալիքներ հասնուն կհուղին ի խորս մեր հալածական և ողբալի կենաց ծովու: Անմիտ ուսուցիչներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թույն կտեղաբուծիչ ուժ չկա: Ավերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մեկ կողմեն, անտարբերություն, օտարամոլություն և ցեխոտ սրտեր մյուս կողմեն: Փառասիրություն, փութկոտություն մեկ երեսեն, ապիկարություն, տգիտություն մյուս երեսեն: Յուրաքանչյուր ոք իր պաշտոնն զգեցած է իրր հանդերձ. յուր մերկություն մտաց ծածկի ի միամիտ աշաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կյանքը դիակնացած: ...Ուր է մեր խոհական հորենացին. թող ելլե արյունաքամ հողու տակեն և ողբա մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի №№ Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի №№ Ա-Զ-ից, Ը-Ժ-ից, 1967 թվականի №№ Դ-Զ-ից, 1968 թվականի №№ Ա-Դ-ից, Է-Ժ-ից և 1969 թվականի № Դ-ից:

¹² Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 61:

պաշտոնին փարած էին անձնահեղձությամբ. իսկ մենք կհափշտակենք գործն ընչաքաղցու-թյամբ:

Սիրտս փլած է:

Կոմիտաս վարդապետ

Հապշտապ, հաճախ անհարիր այդ տույն-րուն մեջ իմաստության կայծեր կան. մտածումներ պոռթկալու այդ ձևը հատուկ էր Կոմիտասին. ինչպես քերթողական իր փորձն-րուն՝ նույնպես իր պարզ խոհերուն մեջ միշտուկոստոստեր Կոմիտաս, թառե թառ կանցներով իր մտածումը:

Եվ ոչ մեկ բժիշկ պիտի կարենար իր հոգին մբայքայող ցավին այնքան ճշգրիտ ախտորոշումն ընել, որքան Կոմիտաս ըրած է ինքը.

— Սիրտս փլած է...

IX.—Սպիտակ հացը

1917-ի վերջերը Թաթավայի թաքստոցս ու թողուցի: Երկուբուրեւ տարի ճգնել էի հոն, ու շիղերս քայքայվել էին այդքան ատենան խուցի մը մեջ ապաշխարելին: Անհրաժեշտ եղավ Բերայի շրջանը գալ պահվորտի ավելի մոտ ըլլալու համար աշխարհին: Առաջինը հերթին կարոտ էի բժշկի: Բայց որո՞ւ կրնայի ղեկել, և ո՞ր բժիշկը կրնար հանդգնիլ մա-հապարտի մը մոտ գալ: Երկար շարժարեցիք ուղեղս, որպեսզի ճար մը գտնեմ: Միակ ա-նունը, որուն վրա հեք ուղեղս կանգ առավ՝ բժիշկ Թորգոմյանը եղավ: Ուրկե՞ ուր Ուրկե՞ միտքս ինկավ այս վտիտ, հիվանդախա, զգուշ ծերունին, որ աքսորեն հրաշքով էր ետս եկել: Բայց գիտեի որ ան բարի մարդ է ու հայրենասեր, ու չվախնա թերևս գալ դարմա-նելու կարմիր հունձքեն դիպվածով ճողոպ-...

րած մտավորական մը, զոր ուստիականութունը կիսնարեր գիշեր ու ցորեկ:

Այլուր պատմած եմ թե այս երկշտ մարդը ինչպես ինձ գալու քաջութիւնն ունեցաւ և շարունակեց թաքստոցս հաճախել, հանձն առաւ վտանգավոր գործեր ալ, որոնք կրնային պատճառ դառնալ իր կորուստին, ինչպես որ ինքը ևս պատմած է իր հուշերուն մեջ:

Բժիշկ Թորգոմյանին միջոցով տեղյակ կըմնային դուրսի կյանքին, ու ան էր որ ինձ լուր կրբեր Կոմիտասին ալ, որուն կայացելէ հաճախ: Գիտեի պաշտամունքի հասնող էր սերը դեպի վարդապետը՝ որուն հետ միասին աքսոր ևս եղեր էր, գիտեի որ մեկն է եղած Կոմիտասը դարմանող դուլզ բժիշկներէն, և զայն բուժարան ղեկավարողներէն, բայց ևս, պրոֆանս, կըարմանային թե բժշկական այսքան փորձառութեամբ մարդիկ ինչպես պարզ հիմարի մը տեղ էին դրեր հեք Կոմիտասը ու զայն նետեր էին հոգեկան հիվանդներու ապաստանարանը:

Լուրերը, զորս ևս կստանայի դուրսէն, զիս բերեր էին այն համոզման՝ թե Կոմիտաս բժիշկներուն կարծած խենդը չէ, և թե անոր ջղային տազնայները հոգեկան տարբեր տառապանքներու արդյունք են: Բժիշկ Թորգոմյան միշտ կհամառեր իր կարծիքին վրա, ու կպնդեր թե ան պետք է աշխարհէն պահ մը մեկուսանա, չգրե ու չկարդա, մոռնա իր նուտաները:

Այս էր բժիշկներուն կողմէ Կոմիտասին պարտադրուած ռեժիմը, — չգրել ու չկարդալ: Բժիշկ Թորգոմյան ինքն իսկ պատմած է ինձի, թե անգամ մը Կոմիտասին այցելելուն՝ գարմանքով տեսած է որ Կոմիտաս սեղանին առջեւ անցած զբաղած է գրելով: Բարի բրժիշկը, սարսափած այս տեսարանէն, կաստե հեք վարդապետը այն միևնույն դայրուլով որով կաստեն իսկական հիմարները:

— Ես ձեզի չըսի՞ թե պիտի շաշխատիք... Հետո թուղթերը կխել ձեռքէն, ու կպատռեն մեծ արվեստագետին շմորած աշքերուն առջեւ:

Վարդապետը ոտքի կկանգնի հանկարծ, ու դուռը ցուց տալով բժիշկին, կպոռա.

— Դո՛ւրս, ալլեա չգաս...

Այդ պահէն կսկսի Կոմիտասի ատելութիւնը մարդոց դեմ, բոլոր անոնց դեմ՝ որոնք իր բարեկամներն էին եղեր երեկ...

Բժիշկ Թորգոմյան 1919 մարտ 17-ին Պոլսին Արշակ Զոպանյանի գրած իր նամակին մեջ ինքն ալ կրսե թե «ամենքս՝ բոտ իրեն, թշնամի ենք, մանավանդ ես, և ինձ հետ բոլոր բժիշկները կամ բժիշկ անունը կրողները»¹³:

Եվ սակայն ատելութիւն չունի Կոմիտաս բոլոր մարդոց դեմ: Ան հաճույքով կընդունի երեկակն իր սանուհիները, իր «Քերթնեքեկ»-ները:

Փերմեղյան քույրերն, որոնք հարևան էին պահվրտած տանս, Կոմիտասին լուրեր տեսպ կառնէին: Կիմանայի անոնց միջոցով, թե դառն օրեր կանցընէ վարդապետը իր ճգնաբանին մեջ: Պատերազմի օրեր էին, սղած էր կյանքը, և հիվանդանոցը չէր կրնար շտալ ըլլալ հիվանդի մը հանդեպ, որուն համար դուլզն գումար մը միայն կվճարէին դուրսի իր բարեկամները: Սև հաց կկերցնէին, այն սև հացը զոր կծամէինք գարշելով: Սպիտակ հաց մեծատուններուն սեղանը կտեսներ միայն:

Լուր դրկեցի Փերմեղյաններուն որ իրենց հառաջիկա այցին սպիտակ հաց տանին վարդապետին: Անոնք շոքոյա ևս տարեր էին մեկտեղ, ու վարդապետը երբ տեսեր էր սպիտակ հացն ու շոքոյան, հափշտակեր էր դառնոք ու բացագանչեր.

— Սպիտակ հաց...

...Զգիտեմ թե կաք թե չկաք հիմա, անո՛ւշ աղջիկներ, որ այդ դժնդակ օրերուն Կոմիտասին այցի կերթայի խումբով ու անոր դառն վայրկյանները կբաղդարացնէին: Աշխարհէն ու իր մարդոցմէն խրտչած իր այդ օրերուն՝ ո՛վ գիտե ի՞նչ անձկութեամբ ան ձեզ կսպասեր, որպեսզի ձեր բարի ժպիտներով ամոքեր իր տառապանքները: Դուք իր կյանքին սփոփանքի վերջին պահերը տվիք, իր հոգին աղջամուղջ մտնելի առաջ...

X.—Քե՛ն աշխարհի՛ն դեմ

Խոնարհինք գիտութեան նվաճումներուն առջև, և հրաշքներուն՝ զորս մեմն բժշկութիւնը կրնէ: Մարդոց գանգը կրանա, հաշմանդամները ոտքի կհանեն, նոր սիրտ կղնն մարդոց կուրծքին տակ: Ան սակայն դեռ ի վիճակի չէ մարդոց հոգին ալ կարդալ, շոշափել անոր ցավերը, թափանցել անոր գաղտնիքներուն:

Ան չկրցաւ ձանշնալ վերքը որ Կոմիտասի հոգին էր կրծքի, ու տապալել էր զայն:

Ան չկրցաւ գիտնալ թե անոր հոգեկան ողբերգութիւնը սկսաւ մարդոց հանդեպ իր քենով, ոչ ալ կրցաւ գուշակել թե ինչու քեն էր քրած ան աշխարհին:

Պատմելով իր այցը Կոմիտասին՝ Հարենցի ամարանոցն դառնալի հետո Բանկալթի իր տունը, Կարո Ուշագլյան կգրէ.

«Այդ միջոցին երբ այցելեցի իրեն, սպասավորը շուկեց թողուլ որ վեր ելլեմ, ըսելով թե վարդապետը մարդ չընդունիր: Ես շատ կարևորութիւն չտվի այս խոսքին, ուղղակի վեր ելա, մտա իր սենյակը՝ «Բարև վարդապետ» ըսելով: Բարևս առաւ բարկացած և բթին տակէն: Շփոթած մնացի:

¹³ «Հուշատետր», «Վեմ», 1938, նոյ.—հունվ., էջ 71:

— Ի՞նչ կուզեք, հարցուց:
— Ուշինչ, վարդապետ, այցելության եկա՝
բաի:
— Մարդ չեմ ուզեր, գնա՛:
—
— Գնա կրսեմ, մինակ մնալ կուզեմ:
— Վարդապետ, ի՞նչ բանի համար վշտա-
ցած եք:

— Եղբայր, իմ տունս չէ՞ այս. ազատ չե՞մ
ուզածիս պես ապրելու. մարդ չեմ ուզեր, չեմ
ուզեր. գացեք, ելեք դուրս:

Եվ երեսը դարձուց անդին: Ելա դուրս և
վարը սպասավորին մոտ իջա:

Այսպես սկսավ վարվել բոլոր այցելուներ-
ուն հետ: Եվ այս վիճակը տեական դառնալ
սկսավ: Մենք տակավին լավատես էինք իր
մասին և կկարծեինք թե իրապես բանն մը
վշտացած է, կամ շատ ծանր մտատանջու-
թյուն մը ունի...: Ժամանակ առ ժամանակ
կրկին փորձ կընեինք իր մոտ երթալու, սա-
կայն տեսանք որ ա՛լ կատակ չէր: Իրապես
հիվանդ էր վարդապետը, հուզված և վախով
կղիտեր մեզ, կաշխատեր մեր ներկայութենեն
ազատիլ: Ոչ ոքի վրա վստահություն ուներ,
միայն իր սպասավորին հետ կխոսեր կարճ-
կտրուկ, իր տնային պետքերու մասին:

Բժիշկ Վ. Թորգոմյան պետք տեսավ հու-
նական հիվանդանոցի մտային հիվանդու-
թյան մասնագետ դուրս. Գոնսոր հրավիրել
խորհրդակցության համար: Քանի մը ան-
գամներ այցելեց բժիշկը: Ոչ մեկ օգուտ:

Օրերը կանցնեին և մեր սիրելի վարդապե-
տը կհամառեր իր լուսկեցության և մարդաս-
յացության մեջ: Հաճախ սնունդ ալ առնել չէր
ուզեր: Մեզի համար իր այս վիճակը բնական
գալ սկսավ: Բայց չէինք համոզված թե վերջ-
նական պիտի ըլլար այդ. վիճակը իրեն հա-
մար, և կսպասեինք որ օրի օր վերստանա իր
նախկին վիճակը: Բժիշկ Թորգոմյան, Ա. Հա-
րենց և Զ. Լ.¹⁴ միշտ կհսկեին և միջոցներ
ձեռք կառնեին ճար մը գտնելու համար:

Այս շենշող մարդը մարած էր: Տխուր և
լուռ, կզակը ափին՝ կղիտեր հեռու ծովն ու
լեռները¹⁵:

Վարդան Սարգսյան, Կոմիտասի ձեռնա-
սունը՝ որ լրիվ ծանոթ է վարդապետին Պոլսո
կյանքին՝ կգրեր տարիներ հետո, թե «Եճշու
աշխարհին քնն ըրավ Կոմիտաս» խորագրին
ներքև.

«Վերադարձավ աքսորեն քայքայված ցի-
ղերով: Ու այդ քայքայված ցիղերուն վիճակ-
ված է դառնությանց նորագույնը ճաշակել:
Պոլսո ցոլերը, որոնք մինչև այս օրը խունկ
ծխած էին իրեն, երաժշտասեր երևալու սնո-

րիվմեն բռնված, մեկ բացառությամբ¹⁶, չմո-
տեցան այլևս իրեն, խորշեցան՝ իրեն ժան-
տախտե:

Զէ՞ մի որ նա աքսորված էր, չէ՞ մի որ նա
կասկածելի մըն էր հաշս թուրք կոռուպարու-
թյան: Անոնք վախցան իրենց կաշին:

Եվ ավելին: Անոնք լայն օրերու բարեկամ-
ներ էին միայն: Խնամակալություն կազմած
էին ու Կոմիտասին ամսաթուղակ կվճարեին
իր «հելալ» քրտինքովը շահած դրամներովը:
Այդ ծանր օրերուն Կոմիտաս չէր կրնար հա-
մերգ սարքել, դասերը նվագած էին, հասույ-
թի աղբյուրը դադրած էր: Ո՞վ պիտի վճարեր
Կոմիտասի տան վարձքը, սնունդը, խոհարար
վարպետին թոշակը: Ո՞վ:

Անոնք չքաշվեցան այս հարցը վարդապե-
տին ականջն հասցնելու. զգացուցին խնայո-
ղություն պետքը. թելադրեցին ծախել գոր-
գերը. ետ դարձնել դաշնակը: Ու նա ստիպ-
վեցավ գրավի դնել ոսկի ժամացույցը որ
նվեր տրված էր իրեն 1906-ին և որ թանկա-
դին էր երաժշտագետին համար իբր հիշա-
տակ:

Վարդապետը չտարավ այս բոլորը, բայց
ներսիդին բույն դրավ ու ծավալեցավ դառ-
նություն: Նա շուրջը գզացնել իր չքավորու-
թյունը, անգամ իր աշակերտներուն: Ինքը
անոթի կեցավ խոհարարը չճամբելու համար:
Քառասնօրյա ծոմ մը պատրվակեց ու աղո-
թելով ջանաց մոռնալ քաղցը: Անկե վերջը
շարունակեց օրական մեկ բաժակ թեյ միայն
խմել, այն ալ առանց շաքարի, երբեմն չամի-
շով¹⁷:

Վարդան Սարգսյան կկարծե որ եթե մար-
դոց դեմ ըրած քենը գլխավոր գրգիռն եղավ
վարդապետին հոգեկան տագնապին, այս
տագնապին մեջ դեր խաղացին նաև ուրիշ
շարժառիթներ ալ, ինչպես տարիներու ըն-
թացքին իրեն հանդիպ ցույց տրված չկամու-
թյունները, իր դեմ քանիցս սարքված խաշա-
կրությունները, դուցե և առհավական տրա-
մագրություններ որոնք Բագոսին խնկարկու
հորմն մը կու գային ինչպես և իր անդրդվելի
կամքը չդավաճանելու կուսակրոնության իր
ուխտին, և ինչ որ գլխավորն է, ցնցումը զոր
կրեւ էր աքսորի սարսափներուն մեջ:

XI. — «Սուտ խեղդի մը չարչարանքը»

Գիտունները դժբախտ սովորություն մը ու-
նին, — իրենց զոհը դադարը չդրած՝ դիա-
զնություն կենթարկեն անոր մարմինը:

Այդպես ըրին Կոմիտասին ալ: Անուն մը
տալն առաջ գայն տապալող ախտին՝ փորձե-
ցին որոնել անոր ծնունդ տվող շարժառիթ-
ները: Ոչ այդ շարժառիթները կրցան երևան
հանել սակայն, ոչ ալ ճշգրիտ անունը տվին
անոր հիվանդության:

¹⁴ Լևոն Զիլեր:

¹⁵ «Արածանի», էջ 71—72:

¹⁶ Կանկարկվի Աստվածատուր Հարենցին:

Այնպես որ Կոմիտաս անդամն ընդունվելու մեղման, իր հետ տանելով գաղտնիքը այն եղբորական հարվածին՝ որ զինք շարժարկը էր զույգ տասնյակ տարի:

Ախտաճանաչության փորձերը միայն բրձիկները չբերին: Խոսք առին նաև շատերը զինք ճանաչողներին:

Ոմանք մինչև նախնիքը գացին: Այդպես ըրավ, օրինակ, Առնակ, իր հայրենակիցը՝

«Սողոմոնին հայրը, Գեորգը, երաժիշտ-դպիր և փնտրված կատակախոս մըն է եղած, միայն թե քիչ մը չափազանց արբեցող»¹⁷:

Կամ ենք, ուրիշներն էս, իր հորը գինովությանը մասին, — ամենն էլ զուրկին ախտաճանաչությունը՝ որ կուղի նախատրամադրություն մը ենթադրել Կոմիտասի մեջ դեպի շարաշուք պահը:

Նույն այդ հայրենակիցը, խոսելով շարժառիթներուն մասին՝ որոնք կրնան ստեղծած ըլլալ Կոմիտասի հոգեկան փոփոխումը՝ կրնա նաև.

«Կրնան իր մտային հիվանդությունը վերադրել հորը արվարձանության (թեև նույն ակին կապարտինք իր մեջն հայտնվող հանձարն ալ), կամ ավելի տրամաբանորեն թուրքին անտրակելի արհամարհումը»¹⁸:

Ուրիշներու համար ժողովրդական - զոհն էր Կոմիտաս: Անոնք կարծեցին թե անոր հոգեկան այս տագնապին մեջ՝ ամուրիի իր կյանքն ալ գեր ունեցեր էր: Եվ բնականաբար մեղքը բարեբեկին կուտարձակության վրին՝ որուն հանձնառու եղեր էր Կոմիտաս, երբ դեռ աշխարհը ճանչցած չէր:

Այս բանին հավաստեց ինչ զինք դարձանող բժիշկներն ալ, և հանցանքը վերագրեցին այն ծայրահեղ ժողովրդական՝ որուն զերին դառնալու իր ուխտին մեջ կհամառոտ Կոմիտաս:

Կարո Ուշագլյան իր հուշերուն մեջ մեղի կալաւ թե քստ բժ. Քորգոմյանի իրեն ըսածին «ձեռնարկներն եղած են զոհացնելու բնության պահանջը, բայց Կոմիտաս մնացած է միշտ անզգա և անզգովի բոլոր այս ձեռնարկներուն հանդեպ»¹⁹:

Սիրո կապերու մասին ես խոսեցան. եթե չգրեցին հրապարակով՝ զոհն հաճախ փսիքսացին իրարու. նույնիսկ անուններն ալ հիշեցին սիրո այդ կապերուն ակնարկած ատեն:

Բոլոր այդ ենթադրությունները պարզ կառնվածներ էին լուր, ու անոնք հաճախ հիմ ունեին սրտաբացությունը զոր Կոմիտաս ցույց կու տար բոլորին հանդեպ և որմե գաղտնիքներ կարծեցին որսալ: Կոմիտաս ամբարշտուղած չէր անտարակույս իր սիրտը ու համա-

կրրություններն ալ անշուշտ ունեիր, ունեցած էր և ունեիր. բայց երբեք չընկեցան անոնք, ու չգալթաղեցուցին իր հոգին. եթե ամբարշտուղած էր իր սիրտը, բայց կրցած էր գայն դադել: Ու ան իր գաղտնիքները հետք տալով...

Ոմանք ալ հալածախտ (manie de persécution) որակեցին Կոմիտասի տաղանայր, կարծելով որ ան ևս կտառապի այդ տեսակ մը ջղադրություններին որուն ենթակա, վերջին ծայր կասկածոտ դարձած, բոլորը թշնամի կկարծե իրեն և կերևակայե որ զինք կհալածեն ամենքը: Այնպես որ կարծողներ կան թե կյանքի ընթացքին իր կրած հալածանքները դառնության պարզ զգացումն մը անդին անցած են, շարժարած են իր հոգին երկար, և վճռական դեր կատարած են իր հոգեկան ուժերուն անգալտացման մեջ: Արդարև կհեղեղվի անընդհատ թե իր առաքելության ճամբուն վրա Կոմիտաս թշնամիներ ունեցավ միշտ դեմը: Զիշդ չէ այդպես որակել խոչընդոտները որոնց բախեցավ գրեթե միշտ և դառնությունները զորս քաղեց ամեն մեկ քայլին: Անձնական թշնամիներ ինչու՞ ունենար:

Հակառակորդի որակումը ևս սխալ պիտի ըլլար տալ ողորմելի այն մարդոց որոնք ատեն-ատեն հայտնվեցան իր ճամբուն վրա, և անկարող ըմբռնելու առաքելությունը որուն լծված էր՝ փորձեցին գայն խանգարել գորտի իրենց կրկնողով:

Ո՛չ, ան թշնամիներ չունեիր, ոչ ալ հակառակորդներ: Իր թշնամին հայկական միջավայրն էր: Ան լիապես կզգար ատ: Այնպես որ արհամարհեց, հեղեց, անգոսնեց զինք հալածողները, դառնությունը իր ներսը խեղդեց: Բայց իրեն ծանր եկավ երբ զինք լռեցին նաև անոնք որ իրենք զիրենք բարեկամ հռչակեին էին իրեն՝ փառքի իր օրերուն:

Բյուզանդ Քեչեյանի կարծիքով տարբեր շարժառիթներ, ձեռք-ձեռքի տված, ստեղծած են վերջին տագնապը:

«Երբեք շաբաթ մեկտեղ ապրելով Կոմիտաս վրդ-ի հետ, սքանչացեր էր իր ֆիզիքական ու բարոյական առողջությանը: Ո՛չ մահիճի, ո՛չ բարձի պետք ունեիր անմեղ մանկան խոր ու անծակ քունը քնանալու համար: Լեզուն միշտ մաքուր ու զվարթ, սակավապետ, բարեհամբույր, և վհատողներուն սիրտ տվող, նաև վերջին ծայր հարգող պատշաճությանց, այնպես որ մեր ազատութենեն ետքն ալ երբեք հանձն չառավ ուրախ թեթև երգ մը երգել, այլ կամ կրոնական և կամ ժողովրդական տխուր տաղեր միայն լսվեցան իր բերնեն: Զինք մոտեն ճանչցողներս իր խելագարությունը կվերագրեք երբեք պատճառի. Ա. խորունկ ցնցումը զոր կրեց ի տես և ի լուր ազգային աղետներուն. Բ. պատերազ-

¹⁷ Առնակ, Կոմիտաս վարդապետ, «Հայրենիք» ամսագիր, 1936 հունվար, էջ 73:

¹⁸ «Հայրենիք» ամսագիր, 1936 հունվար, էջ 79:

¹⁹ «Արածանի», էջ 72:

մին բերմամբ իր նյութական վիճակին հիմնովին քայքայումը և Գ. իր խստակրոն ժողովայնական ջղային հետևանքները»²⁰:

Ինչպես բոլոր արտասովոր մարդիկը՝ իր տարօրինակությունները անշուշտ Կոմիտասն ալ ուներ: Ճարօրինակության այդ պահերը Կոմիտաս կունենար իր կատակներուն, իր սրամտությանց, մասնավանդ իր բառախաղերուն մեջ: Իր հորինած ոտանավորներն անգամ բառախաղեր էին, որոնք որոշ արտառցություն կմատենէին, ինչպես դիտել կուտա Զոպանյան ալ:

«Ոտանավորները Կոմիտասի հանճարին հարադատ ծնունդներ չէին, այլ մեծ մասամբ իր մտքի հիվանդ ըրածներուն տքնաջան բռնազբոսիկ ու բառախաղային մտասնեռումներով տիրապետված արտադրություններ: Ճարօրինակությունները կշեշտվին հետորդհետեւ այն ոտանավորներուն մեջ որ Պոլսէն մեզի ղրկվեցան և զոր ապահովապես բոլորն ալ Պոլիս գտնված ատենը զրած է, տագնապին հետո՝ կես դարթումի վաղանցուկ շրջանին. իսկ ոտանավորները այն տետրին որ Վիլ-էվարի իր սենյակէն գտնվեցավ, փոքր մասով մը գրած է կես հիվանդ վիճակի մեջ, և մեծ մասամբ՝ մտավոր գրեթէ լիակատար խանգարման փուլի մը մեջ: Կհիշեմ որ այդ տետրակին ոտանավորներէն տողեր միտքս պահած էի, երբ ատոնք կարգալիս քիչ հետո 1920-ի աշնան Պեյրուի և հետո Ատանա, հոն ճանչցա հմուտ գինւորական ֆրանսացի բժիշկ մը, որուն խոսեցա Կոմիտաս վարդապետի վրա, և անոր այդ տարօրինակ ոտանավորներէն քանի մը բնորոշ տողերուն թարգմանություն մը ցույց տվի. «Կորած է այդ մարդը, ըսավ, այսպիսի բառախաղերով իրենց ուղեղը շարժարողներուն ցավը՝ որոշ, catalogue հիվանդություն մըն է, և դժբախտաբար անբուժելի»²¹:

*
*
*

Մեկն եղա անոնցմէ որ շարունակ պնդեցին թէ առաջին օրերուն խելագար մը չէր Կոմիտաս, ինչպես կարծեցին այն ատեն և ինչպես կկարծեն մինչև հիմա ալ: Պարզապես դառնացած մըն էր ան, զոնե սկիզբի օրերուն:

Կոմիտասի հոգեկան տագնապը կսկսի ճիշդ այն պահէն երբ իր «խնամակալները կզգացնեն օր մը իրեն թէ սպառնելու վրա է իր» հիմնադրամը, — իր համբերգներէն գոյացած գումար որմէ կհոգային իր ներկա ծախքերը: Ուղղակի հրավեր մըն էր ադ ավելի խնայողությամբ ապրելու Ու այս հրավերը կուղղվեր մարդու մը որ աքսորեն հազիվ

ճողոպրած՝ կապրեր ւարսափներու հաճախանքին մեջ, բոլորովին լքված աշխարհէն:

Գուսան վարդապետի կողմէ մեզ ղրկված նամակ մը Կոմիտասին տված էր մեկ այցելության մասին՝ առիթ տվալ տարիներ առաջ հուզումով բայց և դառնությամբ լեցուն քանի մը տող գրելու Բուքրեշի մեր «նավասարդ»-ին մեջ «Սուտ-խենդի մը շարժարանքը» խորագրին ներքև: Կրտսիք մեր այդ հոգվածին մեջ:

«Վեց տարի մը կըլլա որ Պոլսէն տարին Փարիզ բուժարան մը ներկային հեր արվեստագետը, ու հոն հանձնեցին զայն ճարտար հոգեբուժներու խնամքին: Բայց անկէ ի վեր ամեն օր կալակաի մարդոց հուսը զայն կաղդուրված տեսնելու: Իրեն թէ հիվանդ ըլլար խեղճ Կոմիտասը: Անոնք որ պատերազմի վերջին տարիներուն Պոլիս անցուցած անոր ղրկաւքները գիտեն, դժվար թէ հավատան որ իսկապես հիմարացած է հայ երգին անուշական վարպետը: Ո՛չ. կարծված հիվանդը չէ ան. ան պարզապես խենթ կձեւանա. մարդոց և մանավանդ բարեկամներու դեմ սնուցած իր դառնությունն է որ կատեղեցուցած է իր հոգին, ու զայն կմղն այլանդակություններու իղձ՝ որ է իր անտան համար շարժաւթներ որոնել. մարդիկ, իր բարեկամները, իր «բարերար»-ներն էին որ ջղայնացուցին զինքը, խորացնելով իր մեջ մարդոց հանդեպ իր զգացած զգվանքը: Գիտեմ որ պատերազմի շրջանին պատառ մը սպիտակ հացի կարոտը քաշեց հաճախ որովհետեւ իր հիմնադրամը կսպառեր, և զայն դնուխոց հանձնախումբը շնորհը շունքը կարծես այդ բանը չզգացնել վարդապետին, որ աքսորեն նոր դարձած՝ հոգեկան փափուկ դրություն մը մեջ էր արդեն: Ու քառասուն օրի մը չափ ծով պահեց անգամ մը Կոմիտաս. շատերը այնպես հավատացին թէ երկնային դիտություն հայցելու համար է տառալիլ հայ ժողովուրդին վրա. քիչերը միայն գիտցան որ խնայելու համար էր իր ունեցած քիչիկ մը սնունդը. ու երբ ջղային տկարություն մը անկողին իջեցուց զինքը՝ հիմարանոց մը նստեցին զայն, խենդերու ժխորին մեջ, մարդոցմէ, գուրգուրանք հեռու: Հոն էր որ վարդապետը քնն ըրավ մարդոց դեմ, և ուխտեց ատել իր բարեկամները. հոն էր որ աշխարհի ունայնությունը տեսավ, ուր մարդ էակնն զանեցավ, և երբ պահ մը փորձեց աշխատիլ՝ գրածը ձեռքէն առին պատուեցին մտքի հոգնություն մը խնայելու համար: Ո՛չ, Կոմիտասը խենդ չէ. ան բռնի խենդ կպահէ ինքզինքը. եթէ գիտություն, բժշկություն մասնագետները թույլ կուտան որ գործածենք այդ բացատրությունը: Ծիշտ է, ան այլևս տերը չէ իր ջիղերուն. բայց սխալ տեղ չորո-

²⁰ «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 43:

²¹ «Անահիտ», 1939, ապրիլ—մայիս, էջ 3:

նենք դոնն իր ամսոր բերող հուզուման-
րը...»²²։

Անշուշտ սխալ պիտի ըլլար տառացի ըն-
դունիլ բոլոր այս ըսվածները. անոնք գրվե-
ցան պահու մը երբ շատ մոտ էին մեզ
դժնդակ այն տարիները երբ Կոմիտաս կյան-
քի լեզին կքամեր՝ իր երեկվան «բարեկամ»-
ներեն ապաստարան մը նետված, ու անոնց
դեմ իր զգացած դառնությունը վերածած քե-
նի՝ իր հոգին փակած էր աշխարհին, տառա-
պելու համար լուռ ու միայնակ։ Աշխարհի
դեմ զայրացած այս դժբախտ արվեստագե-
տը խենդի տեղ դրին այն ատեն մարդիկ։
Տառապող մարդ մըն էր ան ի սկզբան։

Հետո էր միայն որ պիտի խենդենար ան։
Բժիշկները չհասկցան իր ցավը։ Սկիզբին
իսկ խենդ կարծեցին զայն։ Չհետաքրքրե-
ցան թե ինչու՞ տակավ քեն կընի մարդոց,
բառասուն օր ծոմ կպահէ, կմաքառի երբ
դինքը բուժարան մը փոխադրել կուզեն։ Զու-
ղեցին գիտնալ թե ինչու՞ կսկսի ատել իր բա-
րեկամներն ու «բարերար»-ները, կվճռե
զանոնք իր մոտեն, ու փոխարեն խալտանքով
կընդունի իր անուշիկ «քերթներէն»-ները
երբ անոնք բուժարան կու գան, ու հրճվանքով
կխլեն անոնց ձեռքեն անոնց բերած շոքուան
ու սպիտակ հացը։

XII.—Զինադադարին

Զինադադար։ Կանգ առած են հայաշինչ
սարսափները։ Փակված է վերջին գլուխը ա-
ղետարմ մեր վեպին, ձգելով խլակներ միայն
շեն ժողովուրդն մը որ դիտապաստ ինկավ
իր հույսերուն ու ձիգերուն զմայլելի թափին
մեջ։ Որբեր ու ավերակներ պատած են հա-
յոց աշխարհը։

Բայց ահա հույսը պահ մը նորեն կողողե-
հայ ժողովուրդի մնացորդացը։ Անգամ մըն
ալ կհավատա եվրոպացի փաղաքուշ խոսքե-
րուն, ցնորքներով նորեն կլեցվի։ Սուգը կը-
մոռնա շուտ մը, ու կկարծե թե նոր գիրք մը
կըրացվի իրեն՝ աղվոր նոր դրվագներով։
Նույն այն գինովությունն է զոր ապրեր էր
տասնամյակ մը առաջ 1908-ին, ցնորքներով
լեցուցած հոգին։

Զինադադարը, 1918 նոյեմբեր 11-ին,
թաքստոցներուն դուռները բացավ։ Խենդի
պես նետվեցանք փողոց։

Կոմիտաս անդին, լքված իր խուցը, մաս
շունի այս ոգևորության մեջ։ Ան քեն ըրած է
միշտ մարդոց, ու լուր ալ շունի թե սուգեն
ելած է արդեն իր ժողովուրդը։

Նոր էջ մըն է միայն բացված անոր սեփ-
սե գրքին մեջ։ Ահավոր վեպն է որ պիտի շա-
րունակվի դժխեմ նոր դրվագներով։

Մովե ծով Հայաստան ստեղծելու տենդեն
րոնված՝ Կոմիտասով, ավա՛ղ, քիչ զբաղե-
ցանք։ Զայն վստահեցանք բժիշկներուն, դի-
տուխան։ Գիտությունը հաճախ սխալեր է.
սխալեցավ և այս անգամ։ Խենդ կարծեց Կո-
միտասը, և հիմարաբուժներուն հանձնեց
զայն։

Պոլիս, իր այս նոր դինովություն մեջ, պա՛-
մը մոռցավ հեք Կոմիտասը։

Մեր խղճմտանքին հետ հաշտված կարծե-
ցինք մենք մեզ՝ հանձնախումբ մը կազմելով
ու դրամ ժողովելով հիվանդանոցի իր ծախ-
քերուն համար։ Ես ալ կայի, ավա՛ղ, այդ
հանձնաժողովին մեջ։

Քիչեր միայն կհանդգնեին այցի երթալ ա-
նոր. ամենուն երեսին կփակեր դուռը։

Այդ հանդուգն մարդոցմե մեկը Զիթունին
եղավ։

«Զինադադարին Պոլիս վերադառնալու
պես՝ կպատմե ան՝ առաջին մտահոգությունս
եղավ երթալ տեսնել դինքը։ Բարեկամս և
իր բարեկամին դուռն. Թորգոմյանի արտո-
նաթուղթը սիրով շնորհակցավ ինձի.— «Ճիշդ
մարդն ես, որմով պիտի կարենանք փորձել
թե վարդապետը որոշ խումբի՞» մը դեմ վրշ-
տացած է իսկապես՝ թե՛ ամեն մարդու քեզ
շատ կսիրեր, գիտենք. դուն զնա՛ ալ մը
տուր՝ տեսնենք թե ի՛նչ կերպով պիտի ըն-
դունի»,— ըսավ մեծահարգ բժշկապետը՝ հո-
գատար պահապան հրեշտակի մը բոլոր զե-
ղուն զգացումներով։

Կնոջս հետ միասին գացինք, Շիշլիի Hôpital
de la Paix, Կոմիտասին՝ կարոտի ու եր-
կար բաժանումի բերումով անհամբեր՝ այցի։
Վերջին պահուն՝ կինս սիրտ չըրավ խուցեն
ներս մտնելու, մնաց պարտեզը։ Ես՝ վերա-
հսկողին առաջնորդությամբ բարձրացա այն
հարկը, ուր էր վարդապետին խուցը։ Մտա
ներս։ Լայն ու երկար բազմոցի մը անկյունը,
պարտեզին վրա նայող պատուհանին կողմը,
հանդարտիկ կծկտած նստած էր հե՛ք բարե-
կամս... Զիս ընդունեց սիրով ու խոսեցանք
երկարորեն»²³։

Զիթունի իր այդ այցը պատմեց այն ա-
տեն»²⁴, թեև թերթեր, ուր իր հոգվածը լույս
տեսավ, մաս մը հապաված էր անկե։

Զիթունի իր այդ հոգվածին մեջ կրսեր.

«Կարմիր օրերն անցած են։ Նոր կյանքի
արևն է ծագել։ Ամեն հայ՝ հայ է կտրեր ու
«Հայաստան, Հայաստան» կնվագե։ Բայց
ո՛վ հարցուց ու փնտռեց հայ մեծ երգահանը։
Ինչու՞ ան մեր մեջ չէ։ Ո՛ւր է Կոմիտաս վար-
դապետը. ի՛նչ կընե, ի՛նչ է իր վիճակը, ու
ի՛նչ պիտի ուլա վաղը։

Երբ կգրեմ այս տողերը՝ աչքիս ու մտքիս
առջև են իր հրացայտ աչքերն ու սարսուղ
զանգամորթը, իր փրկիստփա խոսքերն ու
ցրված բառերը,— երբ այսօր իր սենյակն էի,

²² «Նավասարդ», Բուրբոշ, 1925 փետր.—մարտ, էջ 3։

Շիրիլի հիվանդանոցին մեջ, Պուլկարիային վերադարձես անմիջապես հետո:

Կոմիտաս վարդապետն իսպառ կորսված է, կհավտամ: Այդ մեծ լարը դեռ պիտի հնչի Հայ Քնարին վրա: Միայն թե հայր փութա իր պարտքը կատարելու:

— Ես իմ ժողովուրդիս մեջ կուզեմ ըլլալ,— կրկնեի վարդապետը մեր տեսակցության ընթացքին:

Ժողովուրդը, որուն հետ, որուն մեջ և որուն համար եղած է Կոմիտաս, բայց որմե կտրված է ան՝ երկաթ ատենն ի վեր: Հիվանդանոցին բանտ-միջավայրը՝ բռնաշապիկ մըն է վարդապետին միտքին: Այն միտքը՝ որ ազատ ոգին ճախրանքովն է ընդլայնեի ամեն ժամ:

— Իմ բանալիներս կուզեմ, իմ տո՛ւնս ու գույժներս կուզեմ: Իմ ժողովուրդիս մեջ կուզեմ լինել...

Ականջես չեն հեռանար վարդապետին այս խոսքերը: Եվ ամենուն ականջին կուզեմ հընչեցնել զանոնք: Լսեի՞ք, դուք ամենքդ, որ կը սիրեք Կոմիտաս վարդապետը, ամենքդ որ կճանչնաք հայ ժողովուրդի մեծ զավակը, մեծ երաժիշտն ու մեծ երգահանը:

Ժամ է որ սթափինք, խմբվինք ու կատարենք մեր պարտքը, եթե չենք ուզեր դատապարտ մնալ վաղվան սերունդին առջև: Փըրկենք Կոմիտաս վարդապետը. հանենք զինք իր այժմու բանտ-կյանքեն. բերենք մեր մեջ, ժողովուրդի ժոցին մեջ: Եվ ասոր համար ահա՛ իմ առաջարկը...

Քանի մը սրտակից մտերիմներ կխմբվինք, նյութական միջոցներ կգտենք, անհրաժեշտ կարգադրություններ կընենք, «ի՞ր երգչախումբին հետ մեկտեղ» հիվանդանոցը կերթանք,— «ժողովուրդը եկած է քեզ առնելու, վարդապետ»,— կըսենք, ու վարդապետն առը-փառք իր տունը կփոխադրենք:

Գերագույն փորձն է այս ձևը, շատերու կարծիքով,— Կոմիտաս վարդապետը չկորսնցնելու հուսով:

«Հանդարտ ու մեղմ իր խոսակցութենեն բաջալերված՝ հարցուցի, թե գո՞հ է իրեն տրված սնունդն:

— Հապա՞, ի՞նչպես գո՞հ չըլլամ,— ըսավ դժգոհելով,— այն հացը որ իմ առջև կդնեն՝ շունը չուտեր:

Հացին որակը ժողովուրդի մեջ ալ ուսմելիք էր, ճիշդ է, պատերազմի շրջանին Պոլսո մեջ: Ուստի փորձեցի չքմեղացնել հիվանդանոցը:

— Ո՛չ, ո՛չ, այդպես չէ. ես աչք ունիմ, կը տեսնեմ թե ի՞նչ կուտան ինձի, և ի՞նչ՝ իմ դրացիներուն: Իսկ իմ ոչ միայն հացը ուտվե-

լիք հաց չէ, այլև հաճախ հացին ու ապուրին մեջեն մաղի թելեր, չվանի կտորներ կեղևեն...

Այս էր իր ոգևոր ու դառնացած պատասխանը:

Հարցուցի թե՞ հիվանդանոցեն, իր սենյակեն և առհասարակ իր նիստուկացեն դժգոհելիք ի՞նչ ունի:

— Ինձի ոչ հիվանդանոցը պետք է, ոչ այստեղի կյանքը: Ես իմ տունս կուզեմ, իմ բնակարանս, իմ գրասենյակս ու գույքերս կուզեմ: Ինչո՞ւ համար գորգերը քաշեցին տարան իմ տունես. ո՞վ արտոնեց իրենց: Ո՛ւր են Փանոսի նկարները: Ես իմ բանալիներս կուզեմ: Իմ ժողովուրդես զիս ինչո՞ւ զրկեցին: Ո՛ւր է իմ դաշնակս, ո՞ւր է իմ խոհարար վարպետս, ո՞ւր ցրվեցին իմ աշուկերտները»...

Ասոնք եղան իր կրկին ու կրկին ըսած ու պնդածները,— միշտ խորապես դառնացած՝ իր խնամատար անձերուն դեմ»²³:

*
* *

Զիթունին իրավունք ունեի: Պետք էր այդ մեծ ցույցը ընեինք:

Բժիշկներն էին որ մեզ վախցուցին: Ըսին թե մեծ հուզում մը կրնար ճակատագրական ըլլալ իրեն: Պետք էր հավտայինք, ու քաջությունն ունենալինք զայն բերել նստեցնելու իր բնակարանը՝ հոն ուր ամենեն բեղմնավոր տարիներն անցուցեր էր իր առաքելության, հոն ուրկե տարիներով ջերմություն էր ծծեր հայկական Պոլիսը:

Ու հետո, եթե հոգեկան ցնցումին պիտի շտուկար, լավ էր որ մահանար փառավորման այդ պահուն՝ փոխանակ չարչարվելու ամբողջ 17 տարիներ ևս:

*
* *

Զինադադարի այդ տարիներուն՝ քանիցս փորձեցի երթալ Կոմիտասին այցելել: Նույնիսկ մինչև Շիրիլ, բուժարանին մոտերը գացի: Բայց չհամարձակեցա ներս մտնել. վերջին պահուն սարսափ մը կեցուց զիս դրան սեմին: Հապա եթե վարդապետը պոռար երեսիս:

— Ինչո՞ւ բերիք նստեցիք՝ զիս հոս. ի՞նչ ըրած էի ես ձեզ:

XIII.— Ինչպես տարին զայն Փարիզ

Մեզմե ոչ մեկը համաձայն եղավ զայն Պոլիս պահել: Այնպես կհուսայինք թե տեղափոխություն մը հոգեպես պիտի կազդուրի զայն: Պահ մը խորհվեցավ չքմեղածին կամ երուսաղեմ զրկել հեք վարդապետը. պայման-

²³ Տ. Զիրունի, «Կոմիտասին հետ», էջ 96—97:

²⁴ «Ճակատամարտ», 1918 թվականի, 29:

²⁵ Զիրունի, «Կոմիտասին հետ», էջ 98:

ները նպաստավոր չէին սակայն ադ պահուն սույն վանքերուն մեջ: Եվ այնուամենայնիվ զայն Պոլսեն հեռացնել պետք էր. ան իր մեջ հուզում ու դարհուրանք պիտի արթնցներ միշտ:

Փարիզ ամենեն հարմար վայրը սեպվեցավ ի վերջո: Հոն իր շատ մը բարեկամները կային, ու բուժման համար ավելի ձեռնտու պայմաններ:

Կոմիտաս ոչ մեկ գիտով չէր ուզեր սակայն հեռանալ իր բուժարանեն:

Կղիմենը դարձյալ Կարո Ուշագլյանի հուշերուն.

«Օր մը ըսին ինծի թե վարդապետը Փարիզ պիտի փոխադրեն: Գրիգոր Կարապետյան (հետո Գուսան վարդապետ) իմացուց ինծի թե բժշ. Թորգոմյան կիսափաթի որ հետևյալ օր ներկա ըլլանք Շիրիի հիվանդանոցը վարդապետը տեսնելու համար:

Նույն օրը ներկա եղանք հիվանդանոց. հոն գտանք դոկտ. Մազհար Օսմանը, բժիշկ Թորգոմյանը, հունական հիվանդանոցի բժիշկը և Աղզ. հիվանդանոցի մտային հիվանդութեանց մասնագետ բժշ. Ճեղայիրլյանը: Բացի բժ. Թորգոմյանեն որ չէր ուզեր ելնել, վախճալով որ կհուզվի հիվանդը, մյուս երեք բժիշկները մտան վարդապետին սենյակը՝ քննելու և տեղեկագիր պատրաստելով Փարիզ փոխադրելու համար զինք: Նույն միջոցին վարդապետը ձաշի վրա էր: Ես և Գ. Կարապետյան սենյակին դրան առջին էինք: Ահա ինչ որ անցավ այդ միջոցին:

Հույն բժիշկը «պոնժուր, մոն փեռ» ըսելով մոտեցավ վարդապետին: Վարդապետը զարմացած երեսը նայեցավ և ըսավ.

— Նե՛ խտեյուսեն, սեն քյուրֆեն պիլմե՛զ մի սին, նե՛ տեմեֆ պոնժուր. Մազհար պեյ, շունլարը տիշարը չըգար. պենի բաճարը կտիյուրար... (ի՛նչ կուզես. թուրքերեն չե՛ս գիտեր դուն. ինչ ըսել է «պոնժուր»): Մազհար պեյ, աս մարդիկը՝ դուրս հանե, կընեղեն զիս):

Մոտեցավ բժ. Ճեղայիրլյանը և ըսավ.

— Բարե, վարդապետ, ինչպե՛ս եք:

— Ալ պետ տանա. սեն նե՛ խտեյուսին, պե տամ, ֆի՛ մսին սեն (ահա մեկն ալ. դուն ի՛նչ կուզես, մարդ, ո՛վ ես դուն):

— Բժ. Ճեղայիրլյանն եմ, վարդապետ.

— Հա՛ ձեզալը իմիշ, շու առամըն սուրաքընա պազ (հա՛, պատժված է եղեր. սա մարդուն դեմըը նայե):

Եվ զիս տեսնելով դրան մեջ ըսավ հայերեն լեզվով.

— Գիտե՛ս մեր Կոտինա ձեզայիրլի մարշը կըսենք երգ մը կար, ահա այս ան մարդըն է, ձեզայիրլի (իրապես ալ այդ անունով երգ մը կերգվեր մեր քաղաքը):

Դառնալով դուրս. Մազհար Օսմանին.

— Օսման պեյ, շու առամլարը տիշարը չըգար պեն եմեֆ էյեճեյիմ (սա մարդիկը դուրս հանե, ես պիտի ձաշեմ):

Մազհար Օսման անուշ ժպիտով մը կղիտեր վարդապետը և զայն հանդարտեցնելու խոսքեր կըներ: Բժիշկները տեսան որ կարելի չէ ունէ լուրջ բան ընել, ելան դուրս, Գ. Կարապետյանն և ինձմե խնդրելով մնալ իր մոտ և խոսակցութեան բռնվիլ: Մենք երկուքս ներս մտանք, «Բարե վարդապետ» ըսինք:

— Ի՛նչ կուզեք, դուրս ելեք, դո՛ւրս, պոռաց:

— Ո՛չ, վարդապետ, մենք դուրս չենք ելեր. մենք բժիշկ չենք. եկանք ձեզի այցելութուն տալու: Ես Պուկարիա էի, նոր վերագարձա, ձեզ կարոտցած եմ, ըսի:

Երկուքս մեկ նստանք: Տեսավ որ դուրս չենք ելեր.

— Է՛յ, լավ. ի՛նչ կուզեք ըսավ ժպտելով:

— Ոչինչ, վարդապետ, եկանք ձեզ այցելութուն տալու. ի՛նչ աղվոր սենյակ ունիք. եթե քովը ուրիշ պարապ սենյակ կա, ես ալ պետք ունիմ, զրացի կըլլանք, ըսի:

Եվ սկսանք ասդիեն անդիեն խոսիլ: Վարդապետը միշտ թուրքերենով կպատասխաներ ինձի:

— Վարդապետ, ինչո՞ւ թուրքերեն կխոսիք, ես թուրքերեն չեմ հասկնար, ըսի:

— Անպիտա՛ն, ձեր քաղաքին լեզուն թուրքերեն է, հայերեն չեք խոսիլ չէ՞:

— Է՛, լավ, բայց ես մոռցած եմ այդ լեզուն...

— Ա՛լ հեռացեք, հանգիստ ձգեցեք զիս, ըսավ:

— Լավ, սակայն մենք աղվոր լուր մը ունինք ձեզի հաղորդելու, ըսի:

Զարմացած նայեցավ:

— Փարիզ միջազգային երաժշտական համաժողով տեղի պիտի ունենա եղեր. Ա. Չոպանյան գրած է որ ձեզի Փարիզ զրկեն այդ ժողովին մասնակցելու համար. ահա անոր համար եկանք ձեզ մոտ. պատրաստվեցեք վարդապետ, մոտ օրեն պիտի մեկնիք:

— Ես հոսկի դուրս չեմ ելեր. ով որ բերավ զիս հոս, ան կընա հանել դուրս:

— Լավ, կգտնենք այդ մարդը ով որ է:

— (Բարկացած) Դուն լավ գիտես թե ո՛վ է այդ մարդը. կհիշե՛ս, գիշեր մը իմ տունը մնացի իբրև հյուր... ո՛ր ես տանս բանալիները. ա՛խ, ավաղակներ, պոռաց:

— Վարդապետ, ձեր տանը բանալիները ձեր քովը պետք է ըլլան. ինձի ինչո՞ւ կհարցունեք:

— Գնացե՛ք, դուրս ելեք դուրս, պոռաց կրկին:

Մենք շվարած մնացինք: Զրացի որ այս խեղճ մարդը որքա՛ն անիրավորեն տալիս ու

վրա ըրած են, իր տունն ալ գույքերն ալ ցրվելով և զինք հոս բերելով:

Տեսանք որ, վարդապետը հաճախ կվախնա հայերեն խոսելն, գիտնալով թե թրքական հաստատություն մեջ է: Երկրորդ՝ հիշողությունը տեղն է. ահա թե ինչպես կհիշեր երկու տարի առաջ, գիշեր մը իր մոտ հյուր մնալու: Եվ որովհետև հետևյալ օրն իսկ զինք հիվանդանոց փոխադրած են, ենթադրած է որ ես եմ զինք հոս փոխադրելուն պատճառը. խեղճ վարդապետը իր տունը կփնտռե, կարծելով որ կմնա նախկին վիճակին մեջ...

Մենք դուրս ելանք հուզված և մտածկոտ, բժիշկներուն պատմեցինք տեղի ունեցած խոսակցությունը:

Քանի մը օր ետքը Ա. Հարենց վարդապետը հիվանդանոցն առնելով, հիվանդապահի մը ընկերակցությամբ տարած են ռումանական շոգենամի մը, Փարիզ ղրկելու համար:

Շոգենամին վրա, իր աշակերտներն խումբ մը որ ողջերթի էին գացած՝ երգած են, հուսալով որ վարդապետը կսթափի. սակայն ան երեսը հովին դարձուցած՝ կեցած է առանց բառ մը արտասանելու²⁶:

Բժիշկ Վ. Թորգոմյան 1919 մարտ 17-ին Պոլսեն կգրե Փարիզ՝ Արշակ Չոպանյանին.

«Վաղը կամ մյուս օր մեր Կոմիտաս վարդապետը ճամբա կհանենք դեպի այդտեղ. հետը երկու ընկեր ունի. հող հասնելուն՝ հարկավ պետք եղածը պիտի ընք շուտով՝ զինքը Փարիզեն դուրս Maison de Santé-ի մը մեջ դնելու. պետք եղած ծախքերը ապահովված է հոս. 1500 ոսկի դրամ կա, այս տարվան համար կբավե, մնացյալի մասին ալ կխորհվի: Երկու տարի է՝ որ ինքը այս վիճակին մեջ է. ամենքս՝ ըստ իրեն, թշնամի ենք, մանավանդ ես, և ինձ հետ բոլոր բժիշկները կամ բժիշկ անունը կրողները. վիճակը դեպի լավն է թեև, բայց դեռ շատ պետք ունի խնամքի, ինչ որ այստեղ կարելի չէ: Զինքը ցարդ դարմանել տվինք Շիշլիի Hôpital de la Paix-ի մեջ. բայց ջղագարի մը համար ինչ որ պետք է չկա հոն. պետք է զբաղիլ հետը, աշխատիլ գաղափարները հեղաշրջել, պարտեզ հանել, պտույտներ ընել տալ, և այլն. հիվանդանոցին մեջ հույն բժիշկ մը կար, շատ լավ, իրեն հետ կզբաղեր միշտ. բայց հինգ ամիս առաջ typhus հիվանդությունն բռնվեցավ խեղճը, հետո ջղագարեցավ և ցայժմ կմնա այդ վիճակին մեջ:

Պիտի խնդրեմ որ վարդապետը դուկտ. Քոլոին հետ ցույց տրվի Professeur Gilbert-Ballet-ին և ասոնց հարմար դատած հիվանդանոցին մեջ խնամվի: Չորս օր առաջ խորհրդակցություն մը ըրինք, Hôpital de la Paix-ի բժշկապետին, հույներու և հայոց հիվանդանոցին հիմարաբույժներուն հետ և տե-

ղեկագիր մը ստորագրվեցավ. այդ տեղեկագիրը ես ալ ստորագրած եմ. կաղաչեմ որ դուկտ. Քոլոլյանը հոգեկն զբաղի վարդապետով, ինչպես զբաղեցա ես»²⁷:

Պոլիս իր պարտքը կատարած կսեպեր: Ավելի մեծ գիտնականներու կղրկեր հեք վարդապետը՝ կարծելով որ անոնք պիտի հաջողին վերստին լույս բերել անոր խավարած հոգվուն մեջ:

Ու 1919 մարտ 19-ին Պոլիս շոգենամի գրավ

զայն: Քաջություն չունեցա ներկա ըլլալու այն զարհուրելի պատկերին որ տեղի պիտի ունենար շոգենամին վրա երբ Կոմիտասը ճամբու դնեին բռնի: Իրեն հետ կճամբորդեին երկու հայ երիտասարդներ. անոնք հիվանդին վրա հսկելու պաշտոնն ունեին: Կոմիտասը կհեռացնեին այսպես բռնությամբ ինր տարվան իր հիշատակներն, — իր տեսիլքներն, իր տքնութենն, իր հաղթանակներն, ու այն ահավոր տվյալապանքն՝ զոր կրեր էր զրեթե չորս տարի, 1915 ապրիլ 24-ի այն սև գիշերն ի վեր՝ որ իր Գողգոթայի ճամբան բացեր էր: Որովհետև ինչ ալ եղած ըլլային խոռվի պահերը որոնք պիտի խորտակեին հետո իր հոգին, ողբերգությունը այդ սարսափելի գիշերն սկսավ, այն քստմնելի վայրկյանն՝ երբ հայ ժողովուրդի դահիճը անոր լավագույն ծաղիկները ժողովեց նահատակության տանելն առաջ զայն:

Կոմիտաս զոհն է, ամենն առաջ, ցեղի մը մոլեգնություն՝ որ շղթայացեմ ըրած էր իր բոլոր բնազդները չբացնելու համար իր հավանք զինքը գլած ըլլալու աններելի մեղքին համար:

*
*
*

Այստեղ չավարտիլ սակայն Գողգոթան: Չարչարանքի ուրիշ տասնվեց տարիներ պետք եղան որպեսզի Կոմիտաս աչքերը ցմիշտ փակե աշխարհին:

Ջայն պանթեոն տանելի առաջ այդ տարիներն ալ պետք է կցենք իր Գողգոթային: Այդ տարիներուն մենք հետևել էինք արդեն հեռվին, բայց միշտ մեզ մոտ զգալով մեծ վարդապետը՝ որուն մոտն էինք եղեր իր կյանքին ամենն ճակատագրական հանգրվանին, ինչպես այն օրերուն երբ ան հաղթանակ ստեղծեց իրեն և հայ ժողովուրդին համար, նույնպես այն պահերուն՝ երբ դահիճը փառքի այդ շրջանին կցեց եղբրական սև տարիները...

²⁷ Դուկտ. Վահրամ Զ. Թորգոմյան, «Հուշատետրեր», «Վեմ», 1938, թիվ 1, էջ 71: